

11968



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«01» 11 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 233 - 24

Նախաձեռնող՝

«Քոնսեկոարդ» ՍՊԸ
ք. Երևան, Սեբաստիայի փողոց 31/2

Գործունեությունը՝

Քասախի ջրամբարի կառուցում
Արմավիրի մարզ

Առդիր՝ 11 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 233 - 24

«01» հունվարի 2024թ.

Արմավիրի մարզի Խոյ համայնքում Քասախի ջրամբարի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Քոնսեկարդ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագիծ
Գործունեության տեսակ՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արմավիրի մարզի, Խոյ համայնքի, Ամբերդ, Այգեշատ բնակավայրեր, Արագածոտնի մարզի, Աշտարակ համայնքի, Ոսկեհատ, Ոսկեվազ, Օշական բնակավայրեր

Ներածական մաս. «Քոնսեկարդ» ՍՊԸ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից փորձաքննության ներկայացված նախագծային փաթեթով նախատեսվում է Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ, Այգեշատ և Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ոսկեվազ, Ոսկեհատ և Օշական բնակավայրերի վարչական տարածքներում կառուցել Քասախի ջրամբարը: Ներկայացվող ծրագրի պատվիրատուն ջրային կոմիտեն է, որը ֆինանսավորվում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի /ՎԶԵԲ/-ի կողմից:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետի ա ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ: Նախատեսվող գործունեության համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավարի կողմից 03/08/2023թ-ին տրված № 99 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Նկարագրական մաս. ՀՀ Կառավարությունը ԵՄ աջակցության «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխում. Արևելյան գործընկերության առաջնահերթությունները 2020թ-ից հետո» նախաձեռնության «Լրացուցիչ «Բ» նախաձեռնության» շրջանակներում նախատեսում է կառուցել 17 ջրամբարներ: Ծրագրի իրականացման արդյունքում ոռոգման համակարգերը մեխանիկականից կփոխարինվեն ինքնահոսի՝ ինչը կնպաստի 1 մ³ ոռոգման ջրի ինքնարժեքի զգալի նվազեցմանը, որն իր դրական ազդեցությունը կունենա գյուղատնտեսական արտադրության վրա: Քասախի ջրամբարը նախատեսվում է կառուցել Արմավիրի մարզի Ամբերդ և Այգեշատ, ինչպես նաև Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ոսկեվազ, Օշական և Ոսկեհատ բնակավայրերի վարչական տարածքներում:



Քասախ և Ամբերդ գետերի միացման հատվածում՝ հեղեղային ելքերը 950.0-980.0մ բացարձակ նիշերում կուտակելու և 6215 հա գյուղատնտեսական հողատեսքերը ոռոգման ջրով ապահովելու նպատակով: Գեոմորֆոլոգիայի տեսանկյունից, հետազոտվող տեղամասը զբաղեցնում է Արագած հրաբխային զանգվածի հարավային լանջերի եզրամասի և Արարատյան գոգավորության սահմանային գոտին: Նկարագրվող շրջանը կազմված է հիմնականում նեոգեն-ստորին, միջին և վերին չորրորդական հասակի հրաբխային բազալտային անդեզիտներով, տրախիտներով, անդեզիտներով և դացիտային տուֆերով, որոնք ծածկված են տեխնածին և բնական ժամանակակից էյուվիալ, դեյուվիալ, այլուվիալ-պրոլուվիալ կավային, ավազային, խճա-խճավազային և ճալաքարա-կոպճային գոյացումներով: Երկրաբանական պրոցեսների և երևույթների առումով տեղամասի ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են, սողանքային կամ սելավային պրոցեսները բացակայում են: Ռելիեֆը հարթավայրաբլրային է, ձորակային, մասնատված է գետային ցանցով, ունի դեպի հարավ կողմնորոշված ընդհանուր թեքություն: Ձևաչափական դասակարգմամբ, տեղանքը կարելի է դասել թույլ մասնատված տեսակի: Ներկայացվող ծրագիրն իրականացվում է Կառավարության քաղաքականության և որոշումների հիման վրա, ուստի քննարկվել են ջրամբարի ցուցանիշների և կառուցման եղանակների տարբերակները: Ջրամբարի համար առաջարկվող տարածքները հանդիսանում են մասամբ համայնքային հողեր, իսկ մյուս մասը՝ սեփականաշնորհված: Հողամասերը գյուղատնտեսական նշանակության են՝ արոտավայրեր կամ վարելահողեր: Ջրամբարի ջրածածկման տարածքի կորդինատները՝ ARM WGS-84 կորդինատային համակարգով հետևյալն են՝

Հ/Հ	X [մ]	Y [մ]
1	4457608.9697	8438276.1176
2	4458477.6995	8438068.9471
3	4458561.9129	8438097.2857
4	4458577.9259	8438199.1891
5	4458726.5212	8438214.5813
6	4458569.8444	8438219.4295
7	4458509.5297	8438270.5582
8	4458425.2672	8438537.7029
9	4458390.1006	8438545.0405
10	4457874.8904	8438892.5869
11	4457838.8129	8438948.5501
12	4457857.9042	8439139.0314
13	4458060.9496	8439268.5249
14	4458242.6734	8439427.8434
15	4458470.2380	8439642.5603
16	4458722.0152	8440002.2010
17	4458818.8548	8440255.0551
18	4458694.4600	8440041.1860
19	4458421.1376	8439732.0117
20	4458073.9357	8440634.1804
21	4458282.2257	8439826.1873
22	4458374.9763	8439566.1577
23	4458167.5743	8439516.0814
24	4457858.9066	8439322.0508
25	4457593.7913	8438943.9655



Ջրամբարի լրիվ ծավալը 10 մլն մ³ է, օգտակար ծավալը՝ 8.9 մլն մ³, մեռյալ ծավալը՝ 1.1 մլն մ³, պատվարի բարձրությունը՝ 31 մ: Ջրամբարի հիմնական հիդրոտեխնիկական կառույցը՝ պատվարն է, որի առանցքի տեղադրիչի ընտրությունը կատարվել է հաշվի առնելով հետևյալ էական հանգամանքները՝ Քասախ և Ամբերդ գետերի միացման հատվածից գետի հոսանքի ուղղությամբ 150 մ հեռավորության վրա գտնվում է գոյություն ունեցող ստորին Հրազդանի 2-րդ հերթի ջրանցքի գործող գլխամասը, Քասախ և Ամբերդ գետերի միացման հատվածից պատվարի առանցքը գետի հոսանքին հակառակ ուղղությամբ տեղաշարժելու դեպքում ջրամբարի ծավալը կստացվի 10.0 մլն.մ³-ից փոքր:

Ջրամբարը ծառայելու է գետի հեղեղային ելքերը կուտակելու և սակավաջուր ամիսներին գյուղատնտեսական հողատեսքերը ոռոգման ջրով ապահովելու նպատակով: Ջրամբարի կառուցման նպատակն է Ստորին Հրազդանի 2-րդ հերթի ջրանցքին դոտացիա տալու:

Նախատեսվող պատվարային հանգույցը բաղկացած է՝

- պատվարից,
- ոռոգման-շինարարական ջրթողից (ստորասրահ),
- հեղեղային ջրհեռից:

Պատվարի մարմինը նախատեսվում է իրականացնել տեղական շինարարական նյութերով՝ կոպճա-ճալաքարային բնահողի պրիզմաներով: Ջրամբարի թասի մակերեսը կազմելու է 89.7 հա: Ջրամբարի թասում առկա են բազմաթիվ ենթակառուցվածքներ, ոռոգման և խմելու ջրագծեր, որոնք ենթակա են ապամոնտաժման և տեղափոխման ջրամբարի թասից դուրս: Պատվարի մարմնի համար անհրաժեշտ կոպճա-ճալաքարային շինանյութը նախատեսվում է վերցնել ջրամբարի թասից, որի ծավալն ըստ նախնական հաշվարկների, կազմում է 1.494 մլն մ³: Հաշվի առնելով ջրամբարի առաջարկվող ծավալն և տեղանքի ռելիեֆի առանձնահատկությունները, հանվող հողագրունտի ծավալը ընդունվում է մոտավորապես՝ 2.8 մլն. մ³, որն ամբողջությամբ տեղադրվելու է պատվարի մարմնում, ավելցուկային բնահող չի գոյանալու:

Քասախի ջրամբարի, պատվարի և նրա օժանդակ կառուցվածքների տակ ընկնում է 92.14 հա հողատարածք: Նախատեսվող գործունեության տարածաշրջանում գերակշռում են կիսաանապատային գորշ խճաքարային տիպիկ տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած հողային տիպերը, որոշ մասերում նկատվում են ոռոգելի մնացորդային մարգագետնային գորշ հողային տիպերը: Մթնոլորտային տեղումների և Քասախ, Շախվերդ և Ամբերդ գետերի ջրերը, փոխար բեկորային և ճալաքարա-կոպճային գոյացումների միջոցով ներթափանցելով առաջացնում են միջմակերեսային ջրային հորիզոն: Հիմնական ստորգետնյա ջրերի մեծ մասը կուտակվում է վերին միոցենի (Սարմատի դարաշրջան) կավային ապարներով ներկայացված՝ տարածաշրջանային ջրամերժ շերտի վերևում: Ըստ տեղադրման, սնման և բեռնաթափման պայմանների, ստորգետնյա ջրերը վերաբերվում են գրունտային ջրերին: Գրունտային ջրերի տեղադրման խորությունը ըստ ֆոնդային նյութերի տվյալների ավելի քան 100 մետր է:

Կախված բարձրությունից տարեկան միջին ջերմաստիճանը և տեղումների քանակը խիստ տարբեր են: Արագածի գագաթամերձ շրջանում տեղումները տարեկան հասնում են 1000 մմ, իսկ ցածրադիր (1000 մ) բարձրություններում՝ 300 մմ:

Գետավազանի տարածքի բարձրադիր մասերում (հատկապես Ապարանի ու Արագածի տարածաշրջաններում) տեղումների քանակը համեմատաբար շատ է, ձմեռը տևում է երկար՝ գրեթե 7 ամիս: Տարածքի ստորին մասերում մթնոլորտային տեղումների քանակը խիստ անբավարար է, այդ պատճառով արհեստական ոռոգումը վճարական դեր է խաղում գյուղատնտեսությունում:



Ուսումնասիրվող տեղամասն ունի չոր ցամաքային, շոգ ամառներով և ցուրտ ձմեռներով կլիմա:

- օդի առավելագույն բացարձակ ջերմաստիճանը կազմում է՝ + 41°C:
- օդի նվազագույն բացարձակ ջերմաստիճանը կազմում է՝ - 24°C:
- օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է + 11.9°C:
- մթնոլորտային տեղումների միջին տարեկան գումարը կազմում է 377 մմ:

Ձնածածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը կազմում է 55 սմ, գրունտի սառչման առավելագույն խորությունը 70 մմ:

Ձմռանը գերիշխում են արևելյան ուղղության քամիները՝ 2.2 մ/վրկ արագությամբ, իսկ ամառը՝ 3.3 մ/վրկ արագությամբ արևելյան ուղղության քամիները: Նախատեսվող ջրամբարի տարածքում մթնոլորտային օդն աղտոտող խոշոր արտադրական ձեռնարկություններ չկան, հիմնականում ավտոտրանսպորտի արտանետումներն են: Տարածաշրջանին բնորոշ են էյլովիալ և էյլովիալ-դեյլովիալ նստվածքային տիպերը՝ արտահայտված «Սպիտակահող» կարբոնատա-կրաքարային կուտակումներով, ոչ միատար ավազակավերով և կավավազներով: Տարածաշրջանի հողերի էրոզվածության աստիճանը V-րդ կարգի է՝ 45-70%: Գործունեության տարածքում հողաբուսական շերտը խճավազի և ճալաքարերի պարունակությամբ է:

Նախագծման փուլում կատարված հաշվարկների արդյունքում գետի ջրի միջին տարեկան հոսքը կազմել է՝ 115.23 մլն. մ³/տարի, ջրամբարի կառուցումից հետո կկազմի 79 մլն. մ³/տարի: Տեղանքի հիմնական ջրային ռեսուրսը Քասախ գետն է իր վտակներով: Քասախի ավազանը ներառված է Հրազդան ջրավազանային կառավարման տարածքում: Քասախ գետի ջրհավաք ավազանի տարածքում գետային ջրաբանական դիտարկումները սկսվել են 1913 թվականից՝ գետաբերանից 29 կմ հեռավորության վրա Աշտարակի դիտակետում, որը գործում է մինչ օրս: Տարբեր տարիներին գործել է 10 հիդրոլոգիական դիտակետ, սակայն այսօր Քասախ գետի ավազանն ունի 6 դիտակետ, այդ թվում՝ գետի 5 դիտակետ և մեկ ջրամբարի:

Ջրամբարի տեղամասում հիդրոլոգիական հաշվարկների կատարման համար հիմք են հանդիսացել Քասախ-Աշտարակ հիդրոլոգիական դիտակետի տվյալները: Սակայն Աշտարակի դիտակետում չեն գրանցվել Ապարանի ջրամբարում տրանսֆորմացված առավելագույն ելքերը: Առավելագույն ելքերի վերականգնման համար 1966 թվականից հետո Աշտարակի դիտակետում գրանցված ելքերին գումարվել է Ապարանի ջրամբար մուտք գործած (դիտակետ Վարդենիս) և բաց թողնված (դիտակետ Հարթավան) ելքերի տարբերությունները:

Աշտարակ դիտակետում առավելագույն ելքերի հաշվարկների համար օգտագործվել են 48 տարվա տվյալների շարք: Գրանցված առավելագույն ելքը եղել է 188 մ³/վ (1953թ. ապրիլ), իսկ վերականգնվածը՝ 200,1 մ³/վ (1972թ. մայիս): Միջինում առավելագույն ելքը կազմում է 61,48 մ³/վ, միջին քառակուսային շեղումը կազմում է՝ 41,84:

Քասախի ջրամբարի բնապահպանական թողքի հաշվարկի համար հիմք է հանդիսացել «Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին» Կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի № 1909-Ն որոշմամբ սահմանված Քասախ գետի համար Աշտարակ դիտակետի, իսկ Շահվերդ վտակի համար՝ Փարպի դիտակետի տվյալները: Իսկ Ամբերդ վտակի համար բնապահպանական թողքի հաշվարկ չի իրականացվել, քանի որ 1968-1973թթ. և 1979 թվականին ամառվա սեզոնին հոսք չի գրանցվել:



Բնապահպանական թողքը Քասախի ջրամբարի գետահատածքում

Գետահատվածք	Բնապահպանակ թողք, մ ³ /վ											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
գ. Քասախ - դ. Աշտարակ	1.44	1.4	1.95	1.7	1.3	1.07	1.1	1.16	1.42	1.39	1.63	1.88
գ. Շահվերդ - դ. Փարպի	0.3	0.3	0.3	0.32	0.33	0.31	0.25	0.24	0.24	0.24	0.24	0.24
Քասախի ջրամբարի պատվար	1.74	1.7	2.25	2.02	1.63	1.38	1.35	1.4	1.66	1.63	1.87	2.12

Այսպիսով, Քասախի ջրամբարի բնապահպանական թողքի նվազագույնը պետք է լինի 1,35 մ³/վ հուլիս ամսին, իսկ առավելագույնը մարտին՝ 2,25 մ³/վ: Բնապահպանական թողքն իրականացվելու է իրրիզացիոն ջրթողից (հնարավոր է ակտիվ ջրառի դեպքում ջրի մակարդակն իջնի մեոյալ ծավալի մակարդակից ցածր և ջրթող իրականացվի հատակային ջրթող-խողովակով): Ջրթողերի վրա տեղադրվելու են ջրաչափեր, որոնք թույլ կտան վերահսկել բաց թողնվող ջրի ելքերը: Ինչպես և բոլոր հունային ջրամբարները, Քասախի ջրամբարի դեպքում ևս գետային կոշտ հոսքը ջրի շարժման արագության անկման պատճառով նստում է ջրամբարի հատակին: Ջրաբերուկներով ջրամբարի լցվելը կբերի ջրամբարի տղմակավման: Տղմակավման ծավալից և ժամկետից ելնելով՝ ջրամբարի համար որոշվել է մեոյալ ծավալը: Ջրաբերուկների տարեկան միջին արժեքը Աշտարակ դիտակետում դիտակետում 1,34 կգ/վ է, որը Քասախի ջրամբարի գետահատածքում՝ 50% պահովվածության դեպքում կկազմի տարեկան 14,969 մ³:

Նախատեսվող գործունեությունն իր բացասական ազդեցությունները կունենա շրջակա միջավայրի վրա, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ: Շինարարության փուլում մեծ ծավալի հողային գրունտ կհանվի և կտեղափոխվի: Հանվող բուսահողի ծավալը հաշվարկվել է 126940 մ³, որը նախատեսվում է օգտագործել Ամբերդի հողապատնեշին կից ստեղծվող 4.4 հա հողամասի, ջրամբարի շուրջն օտարվող տարածքում՝ 10.7 հա բազմամյա խոտաբույսերի դաշտերի և 9.6 հա այգիների հիմնադրման համար:

Հողային աշխատանքների ընթացքում ջրամբարի թասից հանվելու և հեռացվելու է 85000 մ³ ճահճային հող, որոնք կհեռացվեն Խոյ և Աշտարակ համայքների կողմից հատկացված վայրեր: Հանվող հողային զանգվածների ընդհանուր ծավալներն՝ ըստ նախնական գնահատման կկազմեն 2,5 մլն.մ³:

Բուսահողը պահեստավորվելու է և հետագայում կօգտագործվի՝ ըստ գործող օրենսդրության պահանջների:

Հողային աշխատանքներ իրականացնելիս կառաջանա փոշի, որը կարող է ցրվել քամու միջոցով՝ փորման աշխատանքների տեղամասից 100 մ տարածքի վրա: Օդի որոշակի աղտոտում տեղի կունենա նաև շինարարական նյութերի փոխադրման ընթացքում՝ մանրախճով պատված մոտեցող ճանապարհներով բեռնատար մեքենաների տեղաշարժից: Շահագործման փուլում օդի որակի վրա ազդեցություն չի լինի:

Մեխանիզմների և տրանսպորտային միջոցների աղմուկի մակարդակը շինարարության ընթացքում էականորեն տարբերվում է և կախված է առաջացող աղմուկի տեսակից և գործունեության մակարդակից: Շահագործման փուլում աղմուկի ազդեցությունը կլինի աննշան:

Շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա (մակերևութային/ստորերկրյա ջրեր) կլինեն հետևյալ հնարավոր բացասական ազդեցությունները՝

- ստորգետնյա ավազանի աղտոտում՝ շինհրապարակից հոսող կեղտաջրերի միջոցով:



- մակերևութային ջրերի հոսքի և դրանց որակի փոփոխություններ՝ աղտոտիչների արտահոսքի պատճառով,
- գետի ջրի որակի փոփոխություն՝ ոչ պատշաճ կերպով պահված շինարարական նյութերի և թափոնների, կենցաղային թափոնների արտանետումների, վառելիքի արտանետումների, յուղերի և քսանյութերի արտահոսքից:

Շինարարության փուլում հողի աղտոտման պատճառ կարող են հանդիսանալ նավթամթերքի արտահոսքը, նավթամթերքի ոչ ճիշտ պահեստավորումը, նավթի և վառելիքի չհեռացված թափոնները՝ ներառյալ օգտագործված յուղերի, հիդրավլիկ թունավոր հեղուկների, դատարկ նավթի տարաների ոչ պատշաճ հեռացումը: Թափոնների վատ կառավարումը կարող է հանգեցնել հողի աղտոտման: Բույսերի կորուստը շինհրապարակի մաքրման հետևանքով կարող է հանգեցնել բնական միջավայրի և կենդանական աշխարհի տեսակների կորստի: Թռչունների և փոքր կենդանիների անհանգստացնելը կարող են հանգեցնել բնակության վայրի կորստի: Քասախի ջրամբարի կառուցման համար նախատեսվող տարածքում կատարված դաշտային այցելությունների դիտարկումների համաձայն՝ բուն ջրամբարի և մերձակա տարածքներում առանձնահատուկ պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող և ՀՀ Կարմիր գրքում կամ ԲՊՄՄ կարմիր ցուցակում գրանցված այլ բուսատեսակները և կենդանիները բացակայում են:

Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ Քասախի ջրամբարի կառուցման համար անհրաժեշտ կլինի հատել մոտավորապես 520 ծառ, որոնք գտնվում են պատվարի կատարի նիշից 980 մ բ.ծ.մ.-ից ցածր: Հասցված վնասը փոխհատուցելու նպատակով՝ հատված ծառերի փոխարեն համայնքի կողմից տրամադրված վայրերում կիրականացվի ծառատունկ՝ մեկը հինգի հարաբերակցությամբ: Տնկվող ծառերի քանակը հաշվարկվել է հետևյալ կերպ՝ մինչև 10 սմ բնի հաստությամբ հատվող ծառերի դիմաց տնկել 1 : 1 հաշվարկով, իսկ 10 սմ գերազանցող դեպքում՝ 1 : 5 հաշվարկով: Այսպիսով, ծառերի թիվը կկազմի՝ մինչև 10 սմ բնով հատվող ծառերի թիվը՝ 190 հատ, 10 սմ գերազանցող՝ 330 հատ: Ծառատունկի և դրանց խնամքի համար ծախսերի խոշորացված հաշվարկը կկազմի 11,151,060 ՀՀ դրամ:

Ջրամբարի կառուցման շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել **բնապահպանական ազդեցությունները մեղմող հետևյալ միջոցառումները՝**

Շինարարական հրապարակում առաջացած փոշու և աղմուկի նվազեցման նպատակով նախատեսվում է՝

- շինարարական նյութերի և թափոնների տեղափոխման համար անհրաժեշտ է օգտագործել փակ կամ ծածկով բեռնատար մեքենաներ.
- հողային աշխատանքներն ըստ հնարավորության, կատարել փոշեռսիչով կահավորված տեխնիկական միջոցներով և սարքավորումներով.
- տրանսպորտային միջոցները և տեխնիկական պարբերաբար ստուգել, կարգավորել և ապահովել ձայնի խլացուցիչներով.
- շինարարական տարածքը և մոտեցնող ճանապարհները պետք է պարբերաբար ջրել, իսկ խիճը, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածները խոնավացնել՝ փոշին նվազեցնելու նպատակով (բացի ձմեռային և տեղումներով առատ ամիսներից):

Ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները շինարարության ընթացքում մեղմելու կամ կանխարգելելու, վնասակար նյութերի արտահոսքը բացառելու համար նախատեսվում է՝

- փոշենստեցման համար ջրցանը կատարել ըստ անհրաժեշտության՝ **հնարավորինս** չառաջացնելով մակերևութային հոսքեր,



- քայառուղերի և այլ նյութերի համար հատկացված վայրերի հատակները բետոնապատել,
- անձրևաջրերի և արտադրական հոսքաջրերի հեռացման և հավաքման համար նախատեսել ժամանակավոր պարզարաններ,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարել մոտակա մասնագիտացված կետերում,
- ավտորտանսպորտային միջոցների անիվների լվացումը կատարել փրփուրային եղանակով՝ կանխելու համար աղտոտված արտահոսքի ներթափանցումը ջրային ռեսուրսներ,
- որպես ափապաշտպան միջոցառում՝ շինարարական գալերեայի ելքամասում և հեղեղային ջրհեռի վերջում, ջրի էներգիան մարելու և գետի հունը ողողումից պաշտպանելու նպատակով, նախատեսված են ջրծեծ հորեր, որոնց շեպերն ու հատակն ամրացվում են քարով,
- դեպի Քասախ գետ կեղտաջրերի արտահոսքը կանխելու նպատակով՝ շինարարության փուլում աշխատողների համար տարածքում կտեղադրվեն կեղտաջրերի հավաքման հոր կամ բիոզուգարան, որի մաքրումը կատարելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքունքներով:

Կենսաբազմազանության վրա ազդեցությունը մեղմելու նպատակով նախատեսվում

Է.

- ըստ հնարավորության՝ բացառել ծառահատումները, առկա թփերի մաքրումը կատարել մասնագետների մասնակցությամբ,
- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցնել շինարարական աշխատանքները,
- շինարարական աշխատանքներն իրականացնել ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար,
- հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:

Շինարարական աշխատանքների ժամանակ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է.

- Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով առանձնացնել պահպանվող գոտիներ:
- Ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, երե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացման ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը, տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ Կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրել համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով: Աշխատանքները կիրականացվեն՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման վարժր սահմանող որոշման (31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն) հիմնարկությանի համապատասխան:



Շինարարական և հողային աշխատանքներ իրականացնելու ժամանակ օգտագործվելու է ջրցան՝ փոշենստեցման նպատակով, ինչն աղտոտումից կպահպանի օդային ավազանը և բնական էկոհամակարգերը, մասնավորապես՝ տեղի բուսականությունը: Ջրամբարի շինարարությունից հետո նախատեսվում է իրականացնել կանաչապատման աշխատանքներ՝ հատուցելով տարածքին հասցված վնասը, կանաչապատման ծրագիրը կմշակվի շինարարության կապալառուի կողմից՝ համայնքի կողմից հատկացված տեղամասերի համար:

Նախատեսվող շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում, ծրագրի ազդակիր տարածքում առաջացող տարբեր տեսակի թափոնները կարող են բացասաբար անդրադառնալ շրջակա միջավայրի վրա, մասնավորապես՝ առաջացնելով լանդշաֆտի փոփոխություն, աղտոտել ջրային և հողային ռեսուրսները և մթնոլորտային օդը, ինչպես նաև ազդել մարդկանց առողջության վրա:

Հողային ռեսուրսների պահպանության հիմնական միջոցառումը բերրի հողաշերտի պահպանումն է: Ջրամբարի թասից դուրս՝ պաշտպանիչ գոտում կազմակերպվելու է բերրի հողի պահեստներ՝ ծածկի տակ շրջանցող առուներով: Բերրի հողն ամբողջությամբ օգտագործվելու է տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով:

Հողային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները և վերջինիս մեջ վտանգավոր նյութերի և քսայուղերի ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է՝

- ճանապարհից դուրս տեղակայվող սարքավորումների վայրում փռել ավազ կամ մանրախիճ,
- բուն գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չնախատեսել,
- շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների վրա,
- հողային գրունտը տարածքում պահպանել ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով,
- առաջացող շինաղբը տեղափոխել համայնքի կողմից նախատեսված աղբավայր,
- հանվող հողային զանգվածն օգտագործել որպես հետլիցք և տարածքի բարեկարգման համար,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարել տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբ /ծածակագիրը՝ 9120040001004/, որը կհավաքվի աղբամաններում, շինարարական աղբ /ծածակագիրը՝ 9120060101004/, կհավաքվի համապատասխան կոնտեյներներում և չաղտոտված հող /ծածակագիրը՝ 3140110008995/: Շինարարական թափոնները և կենցաղային աղբն ամբողջությամբ կանոնավոր կերպով կտեղափոխվի համայնքի կողմից հատկացված աղբավայր: Հաշվի առնելով տարածքի զգայուն էկոհամակարգը՝ շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի բոլոր սպասարկման աշխատանքները, քսայուղերով և վառելիքով լիցքավորումը կիրկանացվի մասնագիտացված կայաններում, ինչը թույլ կտա բացառել վտանգավոր թափոնների առաջացումը:

Իրականացվող ծրագրի տեղամասերում աշխատանքների մեկնարկն իրականացվելու են հնագետի հսկողությամբ: Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ անհայտ հնագիտական շերտի, անհայտ ծագման իրերի, բնության հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են:



են և տեղեկացվելու է համապատասխան պետական մարմին՝ հետագա գործողությունները ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան կազմակերպելու համար:

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել՝ իրականացնելով մի շարք բնապահպանական և սոցիալական միջոցառումներ, որոնց արդյունավետության ապահովման նպատակով պետք է կազմակերպել աշխատանքների մշտադիտարկումներ:

Հաշվի առնելով նախատեսվող ջրամբարի տարածքի ռելիեֆային և բնահողային պայմանները, նախատեսվող պատվարի բարձրությունը (31մ), ինչպես նաև ձկնաբանի կողմից իրականացված ուսումնասիրությունները և տրված եզրակացությունը (որոնք առկա են գնահատման հաշվետվության մեջ,) և այն հանգամանքը, որ ջրամբարը նախատեսվում է կառուցել ոռոգման նպատակով, հետևաբար ջրի հորիզոնը կլինի փոփոխական, ուստի նախագծող կազմակերպության կողմից հիմնավորվել է, որ ջրամբարի ընտրված տարածքում ձկնուղին տեխնիկապես հնարավոր չէ այնպես նախագծել, որ ապահովվի ձկների միգրացիան:

Պատճառաբանական մաս. ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվել են Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ և Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ոսկեվազ բնակավայրերում: Ամբերդ և Ոսկեվազ համայնքների ղեկավարների նստավայրում, անցկացված հանրային լսումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել գնահատման հաշվետվության լրամշակումներում: Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Քասախի ջրամբարի կառուցմամբ հնարավոր կլինի ապահովել սակավ ոռոգման ջրի կայուն և արդյունավետ օգտագործում՝ խթանելով գյուղատնտեսության զարգացումը, ինչպես նաև նվազեցնելով թիրախային խմբի խոցելիությունը կլիմայական փոփոխությունների ազդեցության հանդեպ: Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա լուծել մի շարք արմատական հիմնախնդիրներ՝

- կուտակել գետի օգտագործելի հոսքի մի մասը, կարգավորել ջրահոսքերը՝ ապահովելով բնապահպանական թողքերը,
- հրաժարվել մեխանիկական եղանակով ոռոգման ջրի մատակարարումից և հողերի ոռոգումը փոխադրել ինքնահոս եղանակի, խնայել զգալի չափով էլեկտրաէներգիա, կրճատել շահագործման ու պահպանման ծախսերը,
- բարձրացնել ներկայումս ինքնահոս եղանակով ոռոգվող հողերի ջրապահովվածությունը՝ ապահովելով կայուն ջրամատակարարում ողջ ոռոգման շրջանում:



Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:

2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող մնացորդային գրունտի, շինադրի և տարբեր տեսակի թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել «Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

3. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:

4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:

5. Առաջնորդվել «Կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Զրաէկո-համակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N 64-Ն որոշման պահանջներով:

6. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հողաբուսական շերտի (հողի բերրի շերտ) հեռացումը և պահպանումը կատարել «Կառավարության 08.09.2011թ-ի թիվ 1396-Ն և Կառավարության 02.11.2017թ-ի թիվ 1404-Ն որոշումների պահանջներին համապատասխան:

8. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել «Կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:



ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Քոնսեկուարդ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արմավիրի մարզի Խոյ համայնքում Քասախի ջրամբարի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Հովակիմ Ֆրունզիկյան